

սատակեցնում են դեանի վրայ դեռ նոր դուրս եկած մատաղ մորեխը: 3. Յրուած վնասակար միջատներին մի տեղ հաւաքելու համար կարելի է գործ դնել զանազան հրապուրիչ միջոցներ, որպէս զի յետոյ հնար լինի միանգամից ոչնչացնել այդ բոլորը: Այսպէս, օրինակ, կան որոշ միջատներ որոացող ծառեր, հրապուրող բոյսեր՝ սպառու ելակ: Այս վերջինները ձգում են դէպ իրենց մայիսեան բզեզի թրթուրները: Յորենի ցանքերն աղբերն ևս իրենց մօտ են հաւաքում մի քանի վնասակար միջատներ: 4. Շինւում են նաեւ որոացող տնային, որ գործ են դրուում միջատների յարձակմունքից չվարակուած, չվնասուած տեղերը պաշտպանելու համար: Շատ անգամ միջատները պատահմամբ են ընկնում այդպիսի առուների մէջ, օրինակ թրթուրները: Կայ նաեւ մի տեսակ մորեխ, որոնց կարելի է աւելներով քշել դէպի պատրաստուած առուները: Ամէն անգամ որոշ ժամանակից յետոյ պէտք է նայել առուների մէջ և խոյն ոչնչացնել նոցա մէջ ընկած միջատներին: 5. Մի քանի տեսակ միջատներից վնասուած բոյսերի վրայ կարելի է խորհուրդ տալ ցանկել մակօրկու քամուածք, նաւթախառն սապոնաջուր և այլ ուրիշ հեղուկներ, որոնք խոյն և եթ ոչնչացնում են միջատներին: 6. Միջատների հետ միասին պէտք է այրել ոչնչացնել նաեւ այն նիւթերը, որոնց մէջ նոքա ձկնուր պատապարուել էին. այսպէս, օրինակ՝ զանազան միջատներից վնասուած դաշար հնձելուց յետոյ պէտք է հաւաքել նաեւ արմատի վրայ մնացած ծղոտները, որոնց մէջ ձմերում են թրթուրների մեծամասնութիւնը և խոյն այրել: Երկուստ պէտք է վարուել նաեւ ծառերի կեղեւների և մնացած կոճիկների հետ երբ նկատուի որ նրանց մէջ ևս պահուած են վնասակար միջատների որդեր: 7. Միջատներից վնասուած դաշտերը հողի մէջ ոչ շատ խորը մտած հարսնեակներից ազատելու համար կարելի է խորհուրդ տալ մի յարմար ժամանակ վարել ամբողջը: Զմեռը հարկաւոր է վարել նաեւ պտղատու ծառերի շուրջն եղած հողերը, որպէս զի այդպիսով զրկուելով բուսական պինդ ծածկոցից խոնաւութեան և ցրտութեան ազդեցութեան տակ այնտեղ պա-

տրսպարուող վնասակար որդերն և հարսնեակներն ոչնչանան: * Այդինքնում՝ երբեք չպէտք է վայր թափուած թողնել փչացած, որդնուած պտուղներ, նոքա կարող են մանել հողի մէջ և ապագայում վնասակար միջատների դատնալ: Ընտանի թռչունները խիստ օգտակար են այդինքնի համար, որովհետեւ խոյն և եթ ոչնչացնում են ծառերից թափուած միջատները:

Վնասակար միջատներին սուսնկերով կամ նիւտուող հիւանդութեամբ վարակելը դեռ մինչև այժմ իբրեւ փորձ էր կատարւում, վերջերս կուռելու այդ եղանակը արդէն սկսել են գործ դնել զանազան տեղերում:

Այսպէս բնդհանուր կերպով վնասակար միջատների և նրանց դէմ կուռելու միջոցների մասին խօսելուց յետոյ, կարեւոր է նաեւ որքան այդ հնարաւոր է, մի քանի տեղեկութիւններ հաղորդել նաեւ գույն, շատերին ծանօթ վնասակար միջատների մի քանիսի մասին առանձին առանձին:

(Կը շարունակուի):

Դ. Զ.



ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Բ.

ՊԱՏԴԱՄԱԽՕՍՆԵՐ

Յուրա է, դուրսը, ցուրտ էլի Ղարախաչը կատաղած փշում է. կարծես երդուել է, մինչ ի լոյս երկնքի երեսին եղած բոլոր ամ-

* Երբ միջատները անտառներում հողի երեսին կամ նրա վերին շերտերում հարսնեակ են դառնում, կարելի է խորհուրդ տալ այդպիսի տեղերում բաց թողնել խոզերին և բնաւոր թռչուններին, որոնք հեշտութեամբ կգտնեն նոցա և կլափեն: Խոզերն ուտում են նաեւ որդնուած կաղնիներ, նախ քան հասնելը վայր թափուած հիւանդ տանձեր, խնձորներ և ուրիշ այլ փչացած պտուղներ:

դերը քշելի թափել Ալազեալից ցած, ու գետնի վրայ ինչ որ ձիւն կայ՝ լցնել ձորերն ու փոսերը դգելի հաւսրցնել: Բարձր տեղանը դեղապէտի ձիւն չի մնացել: ձոր ու փոս լցուելի հաւասարուել է քար ու թմբի հետ: Սարերն ու բլուրներն քաշալ հալեորինման մերկ գլուխները ցցած տխուր թեամբ նայում են իրանց ստորոտում շափայ տուած ձեան շերտերին: Գեղամեջին մարդ չի երևում բոլորը փակել մտել են իրանց տները: որը օդի օջաղը վառելի կրակի դէմն է, ձեռ ու ոտը չորացնում, որը գոմէի եզան մտուրը մտած նրանց բուզովն է դրսից եկած սառն մարմինը տաքացնում: որն էլ կիսէն հետ թալուել քիւրտու տակն ու կարպետը գլխուն է քարշել: Միայն փողոցների մէջ երբեմն երբեմն երևում են ջուր կրողները: որ մի ձեռն ու օր ճագուրը՝ գցած, միւսը բերանը կոխած՝ փչելով ճրկմկալով տուն հասնելու է շտապում:—կամ թէ չէ՝ իրկուայ մալի դարման բերողներն, որ քթոցը շալակներուն կռուան եղայ պէս քամու դէմ՝ գլուխ բռնած, մի ձեռը քթոցի ծակի վրայ ցրտից կապտած, միւսը շալէ չուխի մէջ փաթթած թէի տակը սղմած՝ դարիդուս ձգողել է դէպի տուն:

Այս միջոցին երկու մարդիկ կոշտուած քրքրի մէջ և գառան մորթուց շինած մեծ փափաղները մինչև ուսերն քարշած՝ երբեմն ոլորմուր փողոցներով, երբեմն միապաղաղ միմեանց կցուած կտուրներով շտապում էին գիւղի մի ծայրից միւս ծայրը: Սառած չարողների (տրեխ) ճոճուցը և քաթքաթոցը կարծես աւելի ոգի էր տալիս նրանց՝ քայլերն արագ արագ ձգելու: Գլուխները կախ առանց չորս կողմ դիտելու դիմեցին նորա մի դարբաղով դուռ, բաց արին և ներս մտան շուաքը: Բնդարձակ սրահն, որ շուաք անունն է կրում, համարեա թէ լցուած էր երկրազոր ծական գործիքներով: Աջ պատի տակ կանգնած էր ահագին փայտեայ գուլթանը: Նորա մօտ, որպէս հարազատ ձագուկների տեղաւորուած էին խարազանի օխը իւր սունակով և հաստափոր մեծ ու փոքր թաքուններով: Միայն նրա երկաթեղէն դարդը՝ խոփ ձեւին ու բնատէնը (շղթայ) խել էին վերայից, և մօտի սիւնը փաթթել ամուր ու հաստ օղակներով շրջ-

թան, իսկ խոփ ու ձեւին աւելի փառաւոր տեղ էին տուել հանգստանալու:—շղթայափաթ սեան զազաթին՝ գերանի վերայ: Սրանից յետոյ գալիս էր սայլերի խումբը՝ եօթութ հատ օրնի (մեծ) և զեպղեպլի (փոքր տեսակը) թափքեր (ի բաց առեալ անիւները և սունակը սայլի մնացած մասը կոշտում է թափք) իրար վերայ դասաւորած էին, իսկ նոցա գլխավերեւ կանգնած նրանց հաւատարիմ բեռկիր հաստամարմին թաքունները իրանց անբաժան սունակներով: Որպէս սիրով անկիցներ սունակների հետ՝ գլուխ գլխի էին տուել փողոց (մեծ տեսակը, որով հերկերի հողն են քրքրում գարնանը) ու արօրները, իսկ վերջիններս վերայ, որպէս նոցա պսակիչ փառաւոր կերպով պարկել էր տափանը թաւոս ցախերի տակ ծածկելով իրա ղօրնը: Ապա գալիս էր կրտսեր գործիքների դասակարգը, որոնց համար աւելի խնամքով տեղ էր պատրաստած. կայ շրջելու լայնաբերան և թեջի փոքրիկ թիերն ու հորսկիները դաստայ դաստայ կանգնեցրած էին պատի հետ սոցա մօտ խաչեղոր նման կողք կողքի տուած կանգնել էր փայտե եղանների խումբը՝ ծուռնումուռ մասները վեր ցցած, որոնց հետ բնկերացել էին փողոցը (փոքրիկ, որոնցով հաւաքում են հացը և խոտը): Այս բոլորի վերեւ, որպէս քաջ և իշխող դասակարգ՝ գերանդիներն փաթթուած ծիլ խոտերով բազմել, նստել էին հաստ գերանի վերայ, իրանց փայտեայ կոթերը կախ ձգած դէպ հուրսկիներն ու թիակներն, որով կարծես ուղում էին ասել վերջիններս: ահա ձեր նմանը թող ձեղ լինի մենք առ այժմ չենք ուղում նրանց՝ հանգըստանալ է հարկաւոր մինչ արտերի հասնելը: Զախ պատի ամբողջ երկարութեամբ ձգած էր մտուրը, ուր ցուրտ օրերն ոչխարներին խոտ էին տալիս մինչ ոչխարնոցի մաքրելը:

Սրահի մէջ բացուած էր չորս դուռ, որոնցից առաջինը ոչխարանոցին էր, երկրորդը օղայի և գոմերի երրորդը տան, իսկ չորրորդը այվանի (գարնան համար նստելու սենեակ):

— Աւֆ, ուֆ, ուֆ... պահ, պահ, պահ... էս ինչ ցուրտ է, ասելով շրջակալէն գոմի դուռը յետ կրնկին բաց արին մեր ցրտատարներն ու շիտկուան դէպի օդէն:

— Պայուհի, էս ինչքան էլ մուժն է, հմի ինչդ պոխ գանկնք օղի այսպիսով ասաց նոցանից մէկը:

— Ձենիս արեք, խնամ՝ Մարգար—ներս մանողներուն կանչեց մի ծերունի, որ օղի օջղի մօտ նստած ծխում էր—անտէր քամին ձուն ուհող չի թողէ, բերէ մեր երթիկի առաջնէ թոխ էրէ ու մթնեցրէ:

Եկուորները ուղեորուեցան դէպ ծերունին:

— Բարի իրկուն քեզի:

— Բարի իրկուն:

— Վայ Ասածու բարին, դուք բարովի հազար բարի էկաք ձեզի ձեզի: Աման մօտիկ, մօտիկ, խնամ՝ Մարգար ջան, օջղին մօտիկ նստի, բարձի վրայ թիկնի:

— Տօ էման մուժն է որ, հեշ բարձ տեսնամ՝ եմ որ վրէն թիկնեմ:

— Իան չկայ, դսէն էք էկէ, աչքերդ է մուժը. հետը հետը կլուսանայ: Ե՛հ, աղբէր, էս ինչդ եղաւ, որ դուք ոտ զրկը մեր տունը, էս որ քամին քշեց բերաւ ձեզի:

— Ղարախաչուց էլ լաւ քամի, ընդունէն զայրի (բացի) էլ, որը կը բերէ մեզի ձեր տունը, ասաց ծիծաղելով խնամ՝ Մարգարը, որին գիւղացիք Բրդոյնց գէլ կապող Մարգար էին անուանում:

— Ա՛յ անտէր մնայ Ղարախաչը, կալուցին թեղերը իրար շալակ են ելնում կալը օրան թափելու տեղ չի էզնմ աչքերս ջուր է կարում էդ անտէր սարի թարափն աշելով թէ մէ փունս փաթթէ, քամին փէ, որ թեզն էրնենք, թէջ հանենք, էն վաղթը էդ անտէրը քար ու երկաթ է կարում, չի փշմ, հմա հմի կատղել է, էլ ոնչ մարդու երեսի է աշում ոնչ բերնի, էղած, չեղածը գետնի երեսէն վերցնա՛ մարդու քիթ ու բէյնի է շարք տում ու ծեփում ըսաւ դէլ կապող Մարգարի ընկեր Մարօն, որին գիւղացիք արդար մականունն էին տուել:

— Ըստ էս որ քամին քշեց բերաւ, դարտակ էրթալ դալն ինչ էնեմ. հմի ընչի՛ չէզներ ասլանի կաթէն (օղի), որ ամեն մէկս մէ թաս կոնձէինք, բողաղներս ու փորերս տաքցնէինք ու տաք տաք խօրաթայ էնէինք, բարձր թեխ տակ քաշելով խօսեց գէլ կապողը:

— Ե՛հ, աղբէր, էս ինչ էնեմ: դուք ձեր ուղածը բերէիք, էս էլ ջառմեն (տուգանք) քաշէի, սուրֆէն սարքէի՝ հաւ մորթել տալի, փաւ քցել տայի, էս էլ փայելէի, դուք էլ:

— Անունն ինչ դնէինք:

— Անունը՝ ինչ պոխ դնէինք, էն որ, իմ բարեկամներս էք, էկել էք, բարովի հազար բարի իմ աչքի, իմ երեսի վրայ տեղ ունիք. վազուեց է իրար չնեք տեսել, հալ ու քէֆ հարցրել, հմի իրար միտ ենք բերէ, քէֆ ենք էնում:

— Եդ չեղաւ, էդ ապուրը չեփաւ:

— Ընչի՛. ըրա ինչդ, դու ըսա:

— Ինչ ըսեմ, չեմ իմանում՝ դառուլ դուռնի ձէնը: Խաղը ուրախութեն է էնում, քէֆ է քաշում, աղայ, աղջիկ նշանում, մենք ըսման սուս ու փուս նստինք, ընչի՛ ումէն ենք պակաս, փառք Ասածու ընչի ենք կարօտ. թէ մէ էրկուսէն ցած ենք, ասասէն, քսանէն էլ բարձր ենք:

— Աղբէր, աղայ, աղջիկ նշանել էս ըսմ, էս երէկ մէկէլ օրն էր, որ տղէս պսակեցի: Հմի սրէն (հերթը) ձերն է, դուք նշանել, մենք էլ զանք ուրախութեն էնենք:

— Աստու տունը շէն, տուէ՛ ու չի խնայէ: Տղէդ հասած էր՝ պսակեցիր, թող էլ է հասել, էն էլ նշանէ: Հարի հիմի (մինչև հիմա) դու էիր խորջմ, ակերով գինին, բախին, հապիկէքով դաթէն, հալուն ուրիշի տուն տանում, հմի թող ուրիշը բերէ քու տունդ. հողին ու ջանն էլ դուս դայ, շինքը երկնցնէ, բերէ ու բերէ. ինչարի որ իրա աւլաղը՝ հարսնացուն տանի ու պրծնի:

— Ե՛հ, ըստ էս էլի, ձէնդ տաք տեղէն է, դալում հլա գլխովդ չէ անցել՝ աղայ, աղջիկ չեմ նշանել, որ իմանա թէ ինչքան ծանոթ բան է:

— Աղբէր, էս չիտեմ թէ աղջիկ նշանելու միջ ինչ ծանոթ բան կայ. իրան եղը իրա գլխուն քսէ, իրանէն առածը իրա վրայ խարջէ, ճամփու զիր էրթայ էլի: Ընդունէն քեզի կանցնի ու քեզէն ընդուր չի անցնի:

— Ա՛յր էնողին զօլայ (հեշա) կը թախ: Ախր էն էլ ասն աւլաղ է, իրան եղը իրա

զխտուն քսելով՝ անէն հեշ լան չէնելով՝ ճամբու գնել կէզնի:

— Ա՛յ անաշէն, ինչ ես կորցրել, ինչ ման գալըմ: Էման մարդիկ կան, որ հարուր յիցուն, երկու հարուր մանէթ լաշլոյ յիրեք — չորս խալած են առնում ու հարուր մանէթի էլ ջեհեզ չենք:

— Ա՛յ աղբեր, առնէ մարդու խելքը իրա զլօնն է, առնէ մարդ իրա եղով կը տալու: Ընդոնց էրածը մեզի օրինակ չի կրնայ եղնի: Ատուածն էնեւ, լաւ անուն կը հանես, գեշութեն էնեւ, գեշ անուն կը հանես: Մեզի ինչ թէ ընդոնք էգ տեսակ են, էծը իրա ոտովը կը կախուի օջախն իրա:

— Հըրաա որ (ի հարկէ) ըզման է:

— Գօրա հանաքը մէ կողմ թողնինք, շիտակ խօսինք. ես որ կամ, սաղ խօսող մարդրմ եմ: Ըսմ են սաղ (ճշմարիտ) խօսողի բողաղը դուզ է, ծախան էլ խաշղայ: Դառ աղեվիկ գալ, երկար ու բարակ մաղանդով խօսող չխտմ: Բողաղս դուզ է, ինչ որ միաքս կայ՝ դուզրէ, դուզ կըսեմ: Ե՛, գիւղացի Աթոյենց Մատոյի անունն խնացած կէզնիս չէ:

— Հա՛, ինչդ չէ, ասաց ծերունին մի ծնկի գալով և արշինի երկարութեամբ թուր թունչադը ձեռն առաւ ծխախոտ լցնելու:

— Խնացած կէզնիս թէ որնէ, հարիփի անունը երկրէ երկիր է տարածայնուել — միջ մատ աղբար Սարօն, որ մինչև այժմ հանգիստ նստած լսում էր գէլ — կապող Մարգարի նախարանը:

— Հմի, աղբեր, կանի գովելն ի՞նչ է, որ — ընկերոջից սիրա տանելով, խօսքն յառաջ տարաւ Մարգարը — Աստուած մարդուն ջուխտ ձեռով է առել: Հարստութեն կըսես՝ ծով ինչդ որ մարդու գանէն, երթկէն թափեն: Ուրիշ մարդիկ էղնին էգ կարողութեան տէր, քթերը կը անկեն, իրանց իրանց մէջը կուռին, թանազուկ չեն էնէ մարդու հեա խօսալ:

— Ե՛, որ ուսան, թանազուկ չերին մարդու հեա խօսալ, ո՛ւմ ինչ կէնեն:

— Հեչ, ո՛ւմ քացաղը քանի թթու էղնի իրա կարասը կը ճաքցնէ: Հմա էգ մարդիկը են տեսակներէն չեն, էգքան ունենալու մէջ, տեսնմ եւ, էլի հագերը շալէ չու-

ղայ է, սաները չարող դուլոյ: Պղտիկը մենծի յառաջ գաւ է, խոնարհ, հնազանդ, որ մենծը ըսէ՝ դնա քարէն ընկիւ երես չի դարձնէ, չէ չի ըսէ:

— Ըզման է, որ Աստուած էլ դոնէն երթկէն թափել է մանանի պէս, է՛, վկայեց Սարօն:

— Անուշութեանն էլ ինչ ըսեմ՝ որ, մէ խօսքով, Յիսուս Քրիստոս իջէ փափացել է բղոնց մէջ, էլէ փափացել, իջէ օրհնել է, էլէ օրհնել:

— Ե՛, խոնարհ Մարգար, ըզուր վերջը — խօսքը կարեց ծերունին:

— Վերջն էնէ որ, աղբեր, — բաց ասեմ և ոչ ամաչեմ — էգ մարդիկը էլիկ են ու օջախէն քոսմ ծախէլ մեքցնէլ — ու մեզի՝ մեղաւորներուս էլ միջնորդ են քցել: Ես էն խորունկ կարգողներէն չեմ հմա տեղն էկած վաղթը ջուրս ջրամանէն կհանեմ: Գիրն ըսմ է թէ՛ ճամն գնմանս շիրէ, էանի թէ՛ առնէ մարդ իրա լմանէն հաղ կէնէ ու կերթայ ընդուր դուշ կէզնի, ինչդ որ ուսմիօրէն ըսմ ենք, խափը դլորաւ՝ կձուծը գտաւ: Հմի էգ մարդիկն էլ, աղբեր, իրանց լմանն են ման գալմ որ ընդուր հեա բարեկամութեն հաստատեն: Մենծանաց խօրաթէմ կայ. թէ՛ օջիկ էլա՞ք դաւալը հալալ էլա՞ք, Խալէլ էլա՞ք, հօրն ու մօր անուն գեօղատմիչ կէնէ (ծնողների բարի համբաւ պահպանել) ու բարի անուն կը վաստիէ: Ես մարդիկն էլ էգ բանը միտք էնելով՝ ձեր դուռն են իրանց դափէն (ուղղը) չոքեցրել (ձեր դուռն են դափէն չոքացրել փոխարեւական մաքով նշանակում է ձեզ են զիմաւորել), թէ ձեր էլ հալ ու վախթը կը ներէ, ձեր էլ սիրաը ընդոնց կուզէ, թողէք, որ գան աղջիկը տեսնին, աղէն էլ բերենք — աղէն աղջկան տեսնի աղջիկը աղին: Ե՛, հոգեք էլ թէ որ չէք հաւատայ ըսուր, բնուր խօսքին, ձեր բաց աչքով կուզէք էն մարդկանց հալ ու վաղթը (կարողութեան) տեսնել, Կոն Կոնէլ — էլ զնացէք: Թէ չէ՛, ձեր հալ ու վաղթը չէ ներմ եւ թէ չէ՛ էն մարդկանց հեա չէք ուղրմ՝ բարեկամութեն էնէլ, մէ խօսքով ըսէք, չէ, աղբեր, էն մարդկանց Կոն-Կոն մեր քովը չէ, թող երթան ուրիշ տեղ ման գան: Ը՛, ի՞նչ ըսիր խօսքիս, աղբեր, լաւ չեմ ըսմ — էս զլիկն երկու դուռն

էլ առաջիկ կամ դնրմ որը կուզես էն ընտրէ, որ յետե սապապին (միջնորդ) մեզուոր չէնես:

— Լաւ ես ըսմ աղբեր, ողորմի հօրդ, բանը գլխէն ես սաղ բոնըմ վկայութիւնն տուաւ արդար Սարօն:

Մերունին սկսեց կամայուել ծխել և երկար ու բարակ մտածել:

— Ես իմ կանանչ արեխ խէրը չտեսնիմ շարունակեց Սարօն, թէ տուաւ եմ խօսում—էդ տեսակ մարդիկ չինդ ու եամանը ման գաք, չէք կրնայ գտնի: Ձեր աւլադի (զաւակ) բազզը բացուել է, դուք միք առաջը քար քցէ: Առաջի բաղարն է, խերով կէդնի. առջի բաղարէն յետ չը կենողը փոշման չէ:

— Լաւ ես ըսմ տանհեր Սարօ ջան, ես էլ գիտեմ որ էդ մարդիկը լաւ մարդիկ են, հայալ օջաղ են, բարի անուան տէր, հմա մենք էլ պաի մեր մէջը միաք էնենք, աղոնցս հետ մտածենք, թէ մեր էլ հալ ու վաղթը ներքմ է, որ աղջիկ նշանենք:

— Տղէքն ինչքան, ինչքան, որ գիտենան էլի ընդոնց գլօխը քու ոտներուդ չափ չի գիտենայ. հմի դու ընդոնց պաի հարցնես, որ ջուզապ (պատասխան) տաս, քու հալ ու վաղթդ քեզի այան չէ:

— Էդ ըսելու չի էդնի խնամ՝ Մարգար, աղջիկն էլ տան աւլադ է: Չէ, որ չէդնի, իրանէն մենծերուն՝ հօրը, հօրօղբորանցը պուտմ՝ ջուր տուել է, թէթեղ զուլլուզմ (ծառայութիւն) երել է: Բրա օրէնք չէ՞ որ, ընդուր բաղդը վճռելիս հօն ու հօրօղբորանցն էլ հարցնենք, ընդոնց կամքն էլ խնանենք:

— Էդիկ, աղբեր, ձեր անու գործն է, մեր ինչ բանն է, խառնուելու, ասաց Սարօն:

— Զն, որ ըզման է, դուք ձեր միջը մտածէք, խորհուրդ երէք, յետե մեզի խնաց տուէք, ես՝ հն, ես՝ չէ, վեր կենալով ասաց զէլ կապող Մարգարը և սկսեց պատրաստուել գնալու:

— Ինչ ուր, կեցէք՝ հաց բերես, ուտենք, ըզման գալ երթալ կէդնի:

— Ձեռ աւատըմ, որ մենք պատգամեորեն եր, ինչարի մէ կարական ջուզար չաք, ձեր տունը հացի թիփայ չենք կորէ:

— Տօ դր, հերիք զարտակ բաներ միաք էնէք յէ, օղորմի ձեր հօրը. հաց ուտելու մէջն ինչ կայ որ, — ասաց ծերունին, բայց պատգամեորեն չը լսեցին և շուտով դուրս եկան:

Մերունին Գուլոյենց Թորոն էր, որի թոռան՝ Մագիթադին էին ուզում չից Մատոյի աղին:

Եր. Մովսիսեան.



ԳՈՒՐԻԱՅԻ ԵՒ ՇԱՄՈՆԱՅԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Շնորհունակ Գպիր Գ. Տէր-Մկրտչեան 1896-թուին «Աւարատ»-ի մէջ հրատարակեց «Վկայարանութեան» հայերէն թարգմանութիւնը՝ և իւր ուսումնասիրութիւնը «Ազաթանդեղոսի աղբիւրներէից» վերնագրով: * Շնորհունակ Գպիրը ձգնում էր իւր քննադատականով համոզել, որ մարտիրոսարանութիւնս Ազաթանդեղոսի աղբիւրներէից մէկն է:

Քանի որ սրանով վաքաղբութիւնս մեծ կարեւորութիւն է ստանում թէ վերոյիշեալ կարծիքի պաշտպանների և թէ հերքողների համար, քանի որ «Գորք» հայերէն լեզուով մեզ հասած ասորական ամենահին մատենագրական երկերից մէկն է համարում, աւելորդ չենք համարում այստեղ եւրոպական մամուլի մէջ նրա մասին մեզ յայտնի կարծիքներն ամփոփել, հաստատ համոզուած լինելով, որ նրա վաւերականութեան և գրութեան ժամանակի հարցը հակառակ նշանակութիւն ունի Ազաթանդեղոսի հետ ունեցած յարաբերութիւնը պարզելու համար:

Ինչպէս յայտնի է, Գուլշմիտից սկսած տիրում է այն կարծիքը՝ որ Ազաթանդեղոսը մի բանաբաղութիւն (կօմպիլացիա) է, որ եւրդ դարու կիտերին Կորիւն կամ մի ուրիշ մատենագիր կազմել է, զանազան աղբիւրներէից այս պատմական-ճատագովական երկը այն

* Օգոստոս և Սեպտ. ամիսների համարները: